ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«31» 01 2023թ.
№ ԿԱՄՄ/2-136

«Մոսէսքո» ՍՊԸ-ի
Տնօրեն Կ. Գրիգորյանին
ՀՎՀՀ 04214892
ՀՀ, ք. Երևան, Նար-Դոս 75

ՀՀ պաշտպանության նախարարության և «Մոսէսքո» ՍՊԸ-ի միջև 20.09.2022թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-22-7/37-1 ծածկագրով գնման պայմանագրի համաձայն՝ վերջինս պարտավոր էր 2022թ. 4-րդ եռամսյակում, բայց ոչ ուշ քան 10.12.2022թ. մատակարարել 400 կգ. «ՄԳՏ» տեսակի յուղ, որը մատակարարել է 19.12.2022թ. և չի համապատասխանել պայմանգրի տեխնիկական բնութագրին:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «ա» ենթակետը՝ (մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում) ՀՀ պաշտպանության նախարարությունը **30.01.2023թ.-ին** միակողմանի մասնակի լուծում է վերոնշյալ պայմանագիրը:

Տեղեկացնում ենք, որ «Մոսէսքո» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005028106** հաշվեհամարին փոխանցել ***7 877 ՀՀ դրամ***՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն), ***6 564 ՀՀ դրամ***՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետերի համաձայն), ***8 500 ՀՀ դրամ***՝ որպես փոխհատուցում (Պայմանագրի N1 Հավելվածի ծանոթության 8-րդ կետի համաձայն):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է **131 280 *ՀՀ դրամ,*** որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005000758** հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է **196 920 ՀՀ դրամ,** որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900008000664** հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ մինչև 2023թ. փետրվարի 8-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված **131 280 *ՀՀ դրամ՝*** պայմանագրի կատարման ապահովման և **196 920 ՀՀ դրամ՝** որակավորման ապահովման գումարները, ապա «Մոսէսքո» ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2023թ. փետրվարի 8-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2071 սենյակ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ